Կարգապահական գործ թիվ 17019

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2017թ-ի նոյեմբերի 14-ի թիվ 171-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ ԿԳ/100-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ ՄԵԼՔՈՆՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ փաստաբանների պալատի (**այսուհետ նաև՝ Պալատ**) խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Տիգրան Խուրշուդյանի, Խորհրդի անդամներ՝ Կարապետ Աղաջանյանի, Մելանյա Առուստամյանի, Սեդրակ Ասատրյանի, Սիմոն Բաբայանի, Նելլի Հարությունյանի, Կարեն Մեժլումյանի

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Արամայիս Մելքոնյանի (արտոնագիր 583) (**այսուհետ նաև՝ Պատասխանող**) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

21.02.2017թ. Պալատում մուտքագրվել է փաստաբան Ռուզաննա Տեր-Վարդանյանի (**այսուհետ նաև՝ Դիմող**) դիմումն առ այն, որ թիվ ԿԳ-17001 կարգապահական գործով 22.12.2016թ. փաստաբան Արամայիս Մելքոնյանը պատասխան-բացատրություն է ներկայացրել Պալատին, որում զրպարտել և վիրավորել է իրեն՝ գրելով, թե ինքն իր վստահորդներ Թերեզա Օսկանյանից և Էլզա Ոսկանյանից իբրև վերցրել է 4.000 ԱՄՆ դոլար և դրա դիմաց որևէ ծառայություն չի մատուցել:

Դիմելով Պալատ՝ փաստաբան Ռուզաննա Տեր-Վարդանյանը խնդրել է կարգապահական պատասխանատվության ենթարկել փաստաբան Արամայիս Մելքոնյանին:

2. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>**

Պալատի նախագահի 21.03.2017թ. թիվ 68-Ա/ԿԳ-17019 որոշման հիման վրա փաստաբան Արամայիս Մելքոնյանի նկատմամբ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ նաև՝ Կանոնագրքի)** 5.1.2 և 5.2.1(1) ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներով հարուցվել է

կարգապահական վարույթ:

Կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է փաստաբան Արմեն Սիմոնյանին (**այսուհետ նաև՝ Նախապատրաստող**):

3. <u>Դիմողի և Պատասխանողների համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.</u>

<u>3.1. Դիմողի համառոտ բացատրությունները.</u>

Գործի նախապատրաստման ընթացքում Դիմող Ռուզաննա Տեր-Վարդանյանը ներկայացրել է բացատրություն, որով վերահաստատել է դիմումում նշված իր դիրքորոշումը և անդրադարձել է Պատասխանողի 25.05.2017թ. բացատրությանը՝ նշելով, որ այդ բացատրությամբ Պատասխանողը փորձում է խուսափել պատասխանատվությունից և գործը ներկայացնել այնպես, իբրև թե ինքը ոչ թե զրպարտել և վիրավորել է Դիմողին, այլ պարծեցել է իր հաջողություններով, ինչը, ըստ Դիմողի, շատ տարօրինակ մեկնաբանություն է: Դիմողը հակադարձել է դրան՝ նշելով, որ 22.12.2016թ. իր պատասխան-բացատրության մեջ Պատասխանողն ուղղակիորեն նշել է, որ կարգապահական վարույթի գործով դիմումատուն Դիմողն է՝ Ռուզաննա Տեր Վարդանյանը, ուստի՝ ակնհայտ է, որ այդ բացատրության մեջ գրվածն ամբողջությամբ վերաբերում է Դիմողին:

<u>3.2. Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

25.05.2017թ. Պալատ մուտքագրված գրավոր բացատրության մեջ Պատասխանողը հայտնել է, որ իրեն հասցեագրված՝ Դիմողի մեղադրանքը բացարձակ սուտ է, քանի որ ինքը նշված պատասխան-բացատրությունում Դիմողի անձին անդրադարձել է միայն հետևյալ հետևյալ նախադասությամբ. *ի դեպ դիմումատուի աշխատելաոճին է անդրադարձել նաև ՀՀ ԱՆ աշխատակազմի օրինականության վերահսկողության տեսչության «Նոտարիատի և ՔԿԱԳ մարմինների գործունեության օրինականության վերահսկողության» բաժնի պետ՝ Դ. Մխեյանը, որին արձագանքել է փաստաբանների պալատի նախագահի խորհրդական Գ. Մկրտչյանը:*

Ըստ Պատասխանողի՝ ինչ վերաբերում է 4.000 ԱՄՆ դոլար վերցնելուն կամ դրա դիմաց որևէ ծառայություն չմատուցելուն, ապա դա չի վերաբերել Դիմողին: Որպես նշվածի հիմնավորում՝ Պատասխանողը մեջբերել է հետևյալ հատվածն իր պատասխան-բացատրությունից. «Հարկ եմ համարում նշել, որ 12 տարվա մեջ երբևէ չեմ խախտել Փաստաբանի վարքագծի կանոնագիրքը, հարգել և հարգում եմ իմ բոլոր գործընկերներին, երբևէ իմ նկատմամբ վարույթ չի հարուցվել, երբևէ ՋԼՄ-ները չեն անդրադարձել և վատաբանել կամ բացասական կարծիք հայտնել իմ մասին, երբևէ որևէ պաշտոնյա իմ մասին հրապարակավ բացասական կարծիք չի հայտնել, երբևէ իմ վստահորդները հրապարակավ չեն տարածել, որ ես վերցրել եմ 4.000 դոլար և որևէ ծառայություն չեմ մատուցել դրա դիմաց:»: Պատասխանողը նշում է, որ ակնհայտ է, որ նա նշված մեջբերմամբ իր դիրքորոշումն է հայտնում և պարծենում է իր հաջողություններով, այլ ոչ թե զրպարտում կամ վիրավորում է Դիմողին:

Պատասխանողը նաև նշել է, որ Դիմողը միտումնավոր տվել է կոնկրետ անձանց անուններ՝ կապված իբրև թե իր կողմից իրեն զրպարտելու և վիրավորելու հետ (Թերեզա

Պարսամի Օսկանյան, Կարեն Թումանյան, Մարինե Մամյան, Հրանտ Տեր-Վարդանյան, Էլյա Տեր-Վարդանյան, «Հարթակ» էլեկտրոնային թերթ) ՝ դրանով իսկ մոլորության մեջ գցելով ընթերցողին: Վերջիններս, ըստ Դիմողի, ՀՀ Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում քննվող ԵԱՔԴ/5230/02/15 գործով հանդես են գալիս որպես պատասխանողներ, իսկ «Հարթակ» էլեկտրոնային թերթը և ՀՀ փաստաբանների պալատը՝ որպես երրորդ անձինք, իսկ հայցվորը Դիմողն է, ում հիմնական պահանջն իրեն զրպարտելու և վիրավորելու համար դրամական փոխհատուցում ստանալն է:

Պատասխանողը փաստարկում է, որ Դիմողի կողմից նշված խոսքերն իրեն վերագրելը ակնհայտ կլիներ, եթե Պատասխանողն իր պատասխանում նշեր գործով կողմերին կամ կոնկրետ գումարի չափը, ավելին՝ hartak.am-ում տպագրված և վիճարկվող նյութի բովանդակության մեջ նշվել է մոտ 2.500 դոլար գումար, այսինքն՝ որևէ հղում, վկայակոչում կամ գործի տվյալների ներկայացում չի եղել, որը թույլ կտար Դիմողին այդ ամենը վերագրել իրեն:

3.3. <u>Վկաների ցուցմունքները</u>.

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը խորհրդին.</u>

Կարգապահական գործի նախապատրաստման արդյունքում Նախապատրաստողը 27.05.2017թ. կազմել է եզրակացություն, որում նշել է, որ սույն կարգապահական գործով ապացուցման ենթակա է այն փաստը, թե արդյո՞ք թիվ ԿԳ-17001 Կարգապահական վարույթով փաստաբան Արամայիս Սելքոնյանի կողմից 22.12.2016թ. պատասխան-բացատրության մեջ նշված ....*«Հարկ եմ համարում նշել, որ 12 տարվա մեջ երբևէ չեմ խախտել Փաստաբանի վարքագծի կանոնագիրքը, հարգել և հարգում եմ իմ բոլոր գործընկերներիս, երբևէ իմ նկատմամբ վարույթ չի հարուցվել, երբևէ ՀԼՄ-ները չեն անդրադարձել և վատաբանել կամ բացասական կարծիք հայտնել իմ մասին, երբևէ որևէ պաշտոնյա իմ մասին հրապարակավ բացասական կարծիք չի հայտնել, երբևէ իմ վստահորդներս հրապարակավ չեն տարածել որ ես վերցրել եմ 4000 ԱՄՆ դոլար և որևէ ծառայություն չեմ մատուցել դրա դիմաց»* արտահայտությունը նույնական է որպես Դիմողի կողմից իր դիմումում նշված փաստաբան Ա.Մելքոնյանի կողմից իր հասցեին հնչեցրած զրպարտություն և վիրավորանք պարունակող հետևյալ արտահայտությանը՝ *«...ինքը՝ Ռուզաննա Տեր-Վարդանյանը, իր վստահորդներ Թերեզա Օսկանյանից և էլզա Ոսկանյանից իբրև թե վերցրել է 4000 ԱՄՆ դոլար և դրա դիմաց որևէ ծառայություն չի մատուցել, զերազանց իմանալով, որ իմ նախկին վստահորդ Թերեզա Օսկանյանը 2015թ. սեպտեմբերին Պալատին հայտնել էր ինձ զրպարտող կեղծ տեղեկություններ, թե ես իբրև ստացել եմ նրանից և իր քրոջից 2500 ԱՄՆ դոլար /և ոչ թե 4000 ԱՄՆ դոլար/ իրավաբանական փաստերի հաստատման վերաբերյալ* քաղաքացիական գործը վարելու համար, սակայն որևէ ծառայություն դրա դիմաց չեմ մատուցել...».

Ըստ Նախապատրաստողի Դիմողի ներկայացրած դիմումում նշված

հանգամանքների, ներկայացրած փաստաթղթերի, պատասխանողի ներկայացրած բացատրությունների ամփոփ ուսումնասիրության արդյունքում, նշված հանգամանքը չի հիմնավորվել:

12.06.2017թ. Դիմողը ներկայացրել է առարկություններ եզրակացության վերաբերյալ:

Կարգապահական գործը Խորհրդին է հանձնվել 21.03.2017 թ.:

Խորհրդի նիստը տեղի են ունեցել 14.11.2017թ., ժամը՝ 19:30-ին, Պալատի վարչական շենքի՝ ք.Երևան, Զաքիյան 7-2, 4-րդ հարկ թիվ 12 սենյակում:

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» (**այսուհետ՝ Կարգ**) 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս: ***Խորհուրդը ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստը՝***

Թիվ ԿԳ-17001 կարգապահական վարույթի շրջանակներում փաստաբան Արամայիս Մելքոնյանի կողմից 22.12.2016թ. (մուտք թիվ 2566-16) պատասխան-բացատրության մեջ տեղ է գտել հետևյալ արտահայտությունը. *«Հարկ եմ համարում նշել, որ 12 տարվա մեջ երբևէ չեմ խախտել Փաստաբանի վարքագծի կանոնագիրքը, հարգել և հարգում եմ իմ բոլոր գործընկերներիս, երբևէ իմ նկատմամբ վարույթ չի հարուցվել, երբևէ ԶԼՄ-ները չեն անդրադարձել և վատաբանել կամ բացասական կարծիք հայտնել իմ մասին, երբևէ որևէ պաշտոնյա իմ մասին հրապարակավ բացասական կարծիք չի հայտնել, երբևէ իմ վստահորդներս հրապարակավ չեն տարածել որ ես վերցրել եմ 4000 ԱՄՆ դոլար և որևէ ծառայություն չեմ մատուցել դրա դիմաց»*:

Նշված փաստը հաստատվում է թիվ ԿԳ-17001 կարգապահական վարույթի շրջանակներում փաստաբան Արամայիս Մելքոնյանի կողմից 22.12.2016թ. (մուտք թիվ 2566-16) պատասխան-բացատրությամբ:

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Պատասխանող Արամայիս Մելքոնյանը փաստաբան է հանդիսանում 20.10.2006թ., և 2006-2017թթ. ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ 5 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ, որոնցից չոչսն ավարտվել է, իսկ մեկն ընթացքի մեջ է: Ավարտված վարույթներից մեկով Պատասխանողի նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ՝ նկատողություն անդամավճար վճարելու պարտականությունը չկատարելու համար, որը մարվել է, մեկ կարգապահական վարույթով Պատասխանողի նկատմամբ նշանակվել է հիմնական կարգապահական տույժ՝ խիստ նկատողություն և լրացուցիչ կարգապահական տույժ՝ իր հաշվին 4 ժամ լրացուցիչ վերապատրաստում՝

Կանոնագրքի 5.1.2 և 5.2.1(1) ենթակետերի խախտման համար, որն ուժի մեջ չի մտել և Պատասխանողի կողմից բողոքարկվել է դատարական կարգով, մեկ կարգապահական վարույթով Պատասխանողն ենթարկվել է կարգապահական տույժի՝ նկատողության ձևով՝ Կանոնագրքի 5.2.1(1) ենթակետի խախտման համար, մեկ կարգապահական վարույթ կարճվել է:

7. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, գտնում է, որ փաստաբան Արամայիս Մելքոնյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթն ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանությամբ.

Կանոնագրքի 5.1.2 ենթակետի համաձայն՝ ***փաստաբանը պարտավոր է մյուս բոլոր փաստաբաններին ընդունել որպես մասնագիտական աշխատակիցներ և անկեղծ ու քաղաքավարի վերաբերմունք ցուցաբերել նրանց հանդեպ:***

Կանոնագրքի 5.2.1(1) ենթակետի համաձայն՝ ***փաստաբանը չպետք է թույլ տա այլ փաստաբանի նկատմամբ արժանապատվությունը և փաստաբանի համբավն արատավորող գործողություններ ու արտահայտություններ:***

Պալատի խորհուրդը գտնում է, որ Կանոնագրքի վերոնշյալ կանոնի խախտումը որոշելու համար անհրաժեշտ է պատասխանել հետևյալ հարցադրմանը՝

- արդյո՞ք Պատասխանողը փաստաբան Ռուզաննա Տեր-Վարդանյանին չի ընդունել *որպես մասնագիտական աշխատակից և անկեղծ ու քաղաքավարի վերաբերմունք չի ցուցաբերել նրա հանդեպ.*

- արդյո՞ք Պատասխանողը փաստաբան Ռուզաննա Տեր-Վարդանյանի նկատմամբ թույլ է տվել այնպիսի գործողություններ կամ արտահայտություններ, որոնք արատավորում են նրա արժանապատվությունը և փաստաբանի համբավը:

Նշված հարցին պատասխանելուց առաջ Խորհուրդը հիշեցնում է, որ իրավունքի գերակայության հանդեպ ունեցած հարգանքի վրա հիմնված հասարակության մեջ փաստաբանը հատուկ դեր է ստանձնում: Այս առումով կարևոր է հիշել, որ փաստաբանի պարտականությունները չեն սկսվում և ավարտվում միայն հանձնարարականների բարեխիղճ կատարմամբ:

Փաստաբանի գործունեությունը, հետևաբար, իր վրա դնում է բազմազան իրավական և բարոյական պարտավորություններ, այդ թվում՝ իրավաբանի մասնագիտության հանդեպ ընդհանրապես և այդ ոլորտի յուրաքանչյուր անդամի նկատմամբ մասնավորապես:

Փաստաբանի մասնագիտության բովանդակության և հասարակական կոչման նկատմամբ հարգանքի ձևավորման ու ամրապնդման գործում շատ կարևոր է փաստաբանի և իր գործընկերների միջև հարաբերությունների կառուցումը:

Փաստաբանը պարտավոր է մյուս բոլոր փաստաբաններին ընդունել որպես մասնագիտական աշխատակիցներ և անկեղծ ու քաղաքավարի վերաբերմունք ցուցաբերել նրանց հանդեպ:

Այլ փաստաբանի մասնագիտության, անձնավորության, գործնական համբավի նկատմամբ հարգանքը պետք է լինի յուրաքանչյուր փաստաբանին ուղղորդող կանոն, քանի որ նրա բարոյական պարտականությունն է փաստաբանի կոչման արժանապատվության և փաստաբանության հեղինակության մասին հոգալը:

Այսպիսով, Կանոնագրքի կանոնը՝ այլ փաստաբանի նկատմամբ արժանապատվությունը և փաստաբանի համբավն արատավորող գործողություններ ու արտահայտություններ թույլ չտալու վերաբերյալ, փաստաբանական էթիկայի հիմնաքարն է, քանի որ չի կարող իր նկատմամբ հարգանք ակնկալել այն կառույցը, որի անդամները, մասնագիտական, հասարակական, հրապարակախոսական և այլ բնագավառներում միմյանց նկատմամբ չեն ցուցաբերում փոխադարձ հարգանք և կոռեկտություն:

Փաստորեն, վերը նշված կանոնի չպահպանումը չի կարող գնահատվել որպես փաստաբանի մասնագիտության բովանդակության և հասարակական կոչման նկատմամբ հարգանքի ձևավորմանն ու ամրապնդմանը նպաստող գործողություն:

Ավելին՝ Եվրոպայի փաստաբանների միությունների և իրավական համայնքների խորհրդի (CCBE-ի) կողմից հաստատված եվրոպական իրավական մասնագիտության հիմնական սկզբունքների վերաբերյալ մեկնաբանությունների «դ» կետի համաձայն՝ *Փաստաբանը, որպեսզի հարգվի իր վստահորդների, երրորդ անձանց, դատարանների և պետության կողմից, պարտավոր է արժանանալ այդ հարգանքին: Դա հնարավոր է անդամագրվելով հեղինակային մասնագիտությանը. հետևաբար, փաստաբանը չպետք է անի այն ամենը, ինչը կարող է հեղինակազրկել ինքն իրեն կամ առհասարակ փաստաբանությանը, որպես մասնագիտություն, կամ թուլացնել տվյալ մասնագիտության նկատմամբ հասարակության վստահությունը: Դա չի նշանակում, որ փաստաբանը պետք է լինի կատարյալ անձնավորություն, բայց դա նշանակում է, որ նա չպետք է ցուցաբերի ոչ հարիր վարքագիծ, թե փաստաբանություն, թե այլ տեսակի գործունեություն իրականացնելիս, թե նույնիսկ մասնավոր կյանքում, որով հնարավոր է որ վարկաբեկվի տվյալ մասնագիտությունը:*

Սույն դրույթը վկայում է այն մասին, որ կշեռքի մի նժարի վրա դրված է փաստաբանի արտահայտվելու ազատությունը, իսկ մյուս նժարի վրա՝ փաստաբանության, որպես քաղաքացիական հասարակության ինստիտուտի, որին Սահմանադրությամբ վերապահվել է պետության կողմից երաշխավորված անձի իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի ապահովումը, հեղինակությունը, մի կառույցի հեղինակությունը, որին անդամագրված են արդարադատության իրականացման գործընթացում հասարակության և դատարանի միջև միջնորդ հանդիսացող փաստաբանները, կառույց, որի բարձր հեղինակությունից է նաև կախված յուրաքանչյուր փաստաբանի հեղինակությունը պետական մարմինների, դատարանների և այլ անձանց հետ հարաբերվելիս: Այս տեսանկյունից, բնականաբար, արդարացված և հավասարակշռված է փաստաբանի արտահայտվելու ազատության սահմանափակումը, որն ուղղված է մյուս բոլոր փաստաբանների և առհասարակ փաստաբանության հեղինակության բարձրացմանը: Նման սահմանափակումն անհրաժեշտ է հասարակության (այդ թվում՝ փաստաբանական համայնքի) համար:

Տվյալ պարագայում Խորհուրդը հաստատված է համարում այն փաստը, որ Պատասխանողն իր բացատրությունում նշել է. *«Հարկ եմ համարում նշել, որ 12 տարվա*

մեջ երբևէ չեմ խախտել Փաստաբանի վարքագծի կանոնագիրքը, հարգել և հարգում եմ իմ բոլոր գործընկերներիս, երբևէ իմ նկատմամբ վարույթ չի հարուցվել, երբևէ ՀԼՄ-ները չեն անդրադարձել և վատաբանել կամ բացասական կարծիք հայտնել իմ մասին, երբևէ որևէ պաշտոնյա իմ մասին հրապարակավ բացասական կարծիք չի հայտնել, երբևէ իմ վստահորդներս հրապարակավ չեն տարածել որ ես վերցրել եմ 4000 ԱՄՆ դոլար և որևէ ծառայություն չեմ մատուցել դրա դիմաց»:

Վերլուծելով նշվածը և այն համադրելով սույն կարգապահական գործի հանգամանքների հետ, Խորհուրդը գտնում է, որ Պատասխանողի նշված արտահայտություններն ուղղված չեն Դիմողին և չեն պարունակում այնպիսի գործողություններ կամ արտահայտություններ, որոնք արատավորում են Դիմողի արժանապատվությունը և փաստաբանի համբավը կամ թույլ են տալիս ենթադրել, որ Պատասխանողը չի ընդունել Դիմողին որպես մասնագիտական աշխատակից և անկեղծ ու քաղաքավարի վերաբերմունք չի ցուցաբերել նրա հանդեպ:

Նշվածի համատեքստում Պալատի խորհուրդը գտնում է, որ Պատասխանողի գործողություններում Կանոնագրքի 5.1.2 և 5.2.1(1) ենթակետերի խախտման հատկանիշները բացակայում են:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 5–րդ մասի 14-րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7- րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի, 39.8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության 16.26-րդ կետի, Կարգի 28-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 30-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի պահանջներով Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Պալատի նախագահի* 21.03.2017թ. թիվ 68-Ա/ԿԳ-17019 որոշման հիման վրա *փաստաբան Արամայիս Մելքոնյանի (արտոնագիր թիվ 583) նկատմամբ հարուցված թիվ 17019 կարգապահական վարույթը կարճել:

2. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին Դիմողին և փաստաբան Արամայիս Մելքոնյանին իրազեկելու (հանձնելու) մասին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի
խորհրդի նիստը նախագահող՝ **Տիգրան Խուրշուդյան**

14 նոյեմբերի 2017թ.
թիվ ԿԳ/100-Ա

ք. Երևան